ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Մասնագիտություն Դասվար

Թեմա Սովորողների արժեհամակարգի, հանդուրժողականության և վարվելակերպի ձևավորմանը նպաստող մայրենիի մեկ դասի ներկայացում

Կատարող Խաչատրյան Նարա Ալբերտի
Ազգանուն, անուն, հայրանուն

Ղեկավար Գյուլամիրյան Ջուլիետա
մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Ազգանուն, անուն, գիտական աստիճան, կոչում

ԵՐԵՎԱՆ 2022

Բովանդակություն

1. Ներածություն---------- էջ 3
2. Գրական ակնարկ---------- էջ 5
3. Սովորողների արժեհամակարգի, հանդուրժողականության
   և վարվելակերպի ձևավորման հիմնահարցեր---------- էջ 7
4. Սովորողների արժեհամակարգի, հանդուրժողականության և
   վարվելակերպի ձևավորումը մայրենիի դասավանդման ընթացքում--------- էջ 9
5. Սեփական փորձառության ներկայացում---------- էջ 11
6. Եզրակացություններ---------- էջ 15
7. Օգտագործված գրականության ցանկ---------- էջ 16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արդի մանկավարժության կարևոր պահանջներից է երեխաների արժեքային համակարգի ձևավորումը:Հանրակրթության գլխավոր նպատակը անհատին ոչ միայն գիտելիքներով զինելն է,այլև նրա մեջ բարոյական որոշակի հատկանիշներ ձևավորելը: Այսինքն՝ առանցքային է համարվում սովորողների մտավոր,հոգևոր,ֆիզիկական և սոցիալական ունակությունների համակողմանի և ներդաշնակ զարգացումը,նրանց պատշաճ վարքի և վարվելակերպի ձևավորումը:

Ինչպես ամբողջ աշխարհում, Հայաստանում էլ այսօր արժեքային կրթությունը հասարակությանը հուզող խնդիրներից մեկն է:

ՀՀ Հանրակրթության պետական չափորոշչում սովորողների արժեքային համակարգի ձևավորումը ներառված է որպես կրթության բովանդակային բաղադրիչ:

Այս փոփոխությունների ժամանակաշրջանում,երբ ժամանակակից աշխարհը լեփ-լեցուն է բազմաթիվ դրական և բացասական դրսևորումներով,երբ շարունակում են ավելանալ մանկատներն ու ծերանոցները,երբ փողոցում հանդիպում ենք մուրացկան և անօթևան երեխաների,յուրաքանչյուրիս համար հրամայական խնդիր է դարձել անհատի մեջ արժեքային համակարգի,հանդուրժողականության և վարվելակերպի որոշ հատկանիշներ ձևավորելը:

Աշխարհաքաղաքական այս վայրիվերումների ճանապարհին կարևոր դեր ունի ուսուցիչը՝ արժեհամակարգ ձևավորելու և հումանիստ,հայրենասեր,ընտանիքը կարևորող սերունդ դաստիարակելու գործում:Երեխաները դպրոց են գալիս տարբեր ընտանիքներից և նրանց համար ընդունված արժեհամակարգային չափանիշը պայմանավորված է իրենց միջավայրով:

Յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է արժեքային որակների,կամքի,բնավորության,զգացմունքների,հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում:

ՈՒսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի (խաղ,էքսկուրսիա,դասղեկական ժամ,արտադասարանական միջոցառում,հարց ու պատասխան) ընտրության միջոցով առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը:

Խնդիրը դիտարկվում է տարրական դպրոցում մայրենիի ուսուցման գործընթացի արդյունավետ կազմակերպման մեթոդների ընտրության,նպատակային և հետևողական

կիրառման համատեքստում,քանի որ երեխայի բարոյական,հոգևոր,գեղագիտական,իմացական,մշակութային և ազգային արժեքների ձևավորման համար մեծ նշանակություն ունի տարրական դպրոցը,մասնավորապես՝ հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների հիմքերն արմատավորող մայրենին:

Այս առումով անհերքելի է մայրենիի ուսումնասիրման գործընթացում գրական-գեղարվեստական ստեղծագործությունների բանահյուսական պատառիկների ուսուցման նշանակությունը և կարևորությունը:Վերջիններս օժտված են կրտսեր դպրոցականների արժեհամակարգի ձևավորման հսկայական ներուժով:

Այդ ստեղծագործություններում արտահայտված են մեր ժողովրդի հոգեկերտվածքը,աշխարհընկալումը,մարդասիրական գաղափարներն ու գալիքի երազանքները:Այս ամենն է,որ անհրաժեշտ է ավանդել ժամանակակից էթնոկրին:Այսպես նա պիտի հասնի այն գիտակցության,որ հասարակական կյանքի առաջընթացը պայմանավորված է համախմբվածությամբ,հանդուրժողականությամբ,մշակութային արժեքների ոչ միայն ստեղծմամբ,այլև՝ պահպանմամբ:Սերունդ,որը կկարողանա շարունակել ազգային լավագույն ավանդույթները,աշխարհին ու մարդկությանը ցույց տալ իր մշակութային հարստությունն ու բարոյահոգեբանական արժանիքները:

<u>Հետազոտական աշխատանքի նպատակը՝</u>

Դասավանդման ընթացքում սովորողների մեջ արժեհամակարգի,հանդուրժողականության և վարվելակերպի ձևավորման ուսումնասիրություն

<u>Հետազոտության խնդիրներն են՝</u>

1.ուսումնասիրել թեմային վերաբերող գիտաուսումնական գրականությունը.

2.պարզել՝ ինչ ասել է «արժեքային համակարգ»,դրա բովանդակությունը մայրենիի դասավանդման համատեքստում.

3.բացահայտել արժեքային համակարգի,հանդուրժողականության և վարվելակերպի ձևավորման ուղիներն ու միջոցները:

ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Մասնագիտական գրականության վերլուծության արդյունքները ցույց են տվել,որ յուրաքանչյուր հասարակություն,սոցիալական խումբ,հասարակական խմբավորում ստեղծում է իրեն հատուկ ընդհանուր և յուրահատուկ արժեքային համակարգեր և վարքականոններ,որոնք արտահայտում են նրանցում գերակայող հետաքրքրությունները և նպատակները:Այդ հասարակությանը պատկանող մարդն ընդունում է դրանք որպես իր վարքի չափանիշ:

Անձնային արժեքը մարդու մասին գիտությունների՝ փիլիսոփայության,հոգեբանության,մանկավարժության,սոցիոլոգիայի առանցքային խնդիրներից մեկն է:Անձի արժեքային համակարգի ձևավորման և զարգացման խնդիրը ընդունված է դիտարկել հոգեկան զարգացման ընդհանուր օրինաչափությունների համատեքստում:Այն անմիջականորեն կապված է տարիքային զարգացման առանձնահատկությունների հետ:

Վերլուծելով անձի իմաստային ոլորտի ձևավորման և զարգացման խնդիրը՝ Ա.Սեռին պնդում է,որ այդ գործընթացները արտացոլում են տարիքային և անձնային զարգացման ընդհանուր օրինաչափությունները:Դ.Լեոնտևը նշում է,որ յուրաքանչյուր անձի զարգացման գործընթաց բնութագրվում է սոցիալական հանրության արժեքների և դրանց փոխակերպումների,այսինքն՝ անձնային արժեքների կերպափոխմամբ:

Որպես անձնային արժեքների ձևավորման նախադրյալներ՝ դիտարկվում են սոցիալականացման առանձնահատկությունները,տարիքային զարգացման փուլերը,երեխայի ինտելեկտուալ զարգացումը,կրթությունը,տեղեկույթը,մակրո- և միկրոմիջավայրի առանձնահատկությունները:Անձի արժեքային համակարգի ձևավորումն իրականանում է մի շարք գործոնների ազդեցությամբ:Այդ գործոններն են ընտանիքը,հասարակությունը,դպրոցը,շրջապատի սոցիալական արժեքները և այլն:

Արժեքային համակարգի ձևավորումն անհնար է պատկերացնել հասարակությունից՝ մարդկանց հետ շփումից զատ:Անձի արժեհամակարգը ձևավորվում է սոցիալականացման ընթացքում ինտերիորիզացիայի(ներքնայնացման)՝ հասարակական-քաղաքական,բարոյական,գեղագիտական իդեալների(հասարակական փորձ և մշակույթ) յուրացման միջոցով,որոնք բնորոշ են տվյալ սոցիալական հանրությանը:Արժեքային համակարգի ձևավորումն ընթանում է դաստիարակության և կրթության ընթացքում սոցիալական փորձի յուրացման միջոցով:Անձնային արժեքները

ձևավորվում են սոցիալականացման ամբողջ ընթացքում(Ռուչկա՝ 1976,Անանև՝ 1996,Լեոնտև՝ 1998,Սուրինա՝ 1996) :

Ժ.Պիաժեն անձի արժեքային կողմնորոշումների զարգացումը կապում է ինտելեկտուալ զարգացման մակարդակի հետ: Նա համարում է,որ բարոյական դատողությունների ներքնայնացումը երեխաների մեջ տեղի է ունենում զարգացող մտածողական կառուցվածքների և աստիճանաբար ընդլայնվող սոցիալական փորձի փոխազդեցության արդյունքում:

Աճող սերնդի արժեքային համակարգի ձևավորման մասին գաղափարներ են արտահայտել Դավիթ Անհաղթը,Անանիա Շիրակացին,իսկ Խաչատուր Աբովյանը ցանկանում էր հիմնել նոր տիպի դպրոց: Նա մեծ տեղ էր հատկացնում մտավոր կրթությանը,բարոյական,գեղագիտական,աշխատանքային և ֆիզիկական դաստիարակությանը:

Միքայել Նալբանդյանը դպրոցի վերաբերյալ իր դրույթներից մեկում գրում է.

«Դպրոցական կրթությունը պետք է ապահովի երեխայի համակողմանի ու ներդաշնակ զարգացումը,ձևավորի արժեքային համակարգ»:

Ղազարոս Աղայանի մանկավարժական գործունեության առանցքային խնդիրը եղել է երեխայի համակողմանի ու ներդաշնակ զարգացումը,որի համար կարևոր էր համարում մտավոր,բարոյական,գեղագիտական,աշխատանքային դաստիարակությունը:

Սովորողների արժեքային համակարգի,հանդուրժողականության և վարվելակերպի ձևավորման հիմնահարցերը

Երեխաների կրթության մասին խոսելիս հաճախ օգտագործում ենք «արժեքներ» հասկացությունը: Բոլորս կարևորում ենք արժեքների ձևավորումը գալիք սերնդի մեջ և միգուցե այդ բառին ինչ-որ ենթագիտակցական իմաստ ենք հաղորդում: Արժեքը հնարավոր չէ ստանալ հեշտությամբ, այն պետք է վերապրել, անցկացնել քո միջով, զգալ ու գիտակցել: Այդ ամենի դիմաց մենք ստանում ենք իմաստներ, քանի որ արժեքներն են իմաստավորում կյանքը: Առանց արժեքների կյանքը դատարկ է: Հեշտ, առանց կորուստների և հաղթահարումների ապրելն երբեք չի երջանկացնում հենց այն պատճառով, որ չի բերում արժեքների ձևավորման: Արժեքների մեծ մասը սնվում է էթիկական նորմերից, ձևավորվում է դրանց շնորհիվ: Էթիկական նորմերը անհրաժեշտ են մարդկանց համակեցությունը ապահովելու համար. դրանք պարտադրում են հրաժարվել ցանկալիից՝ հանուն ընդհանուր շահի: Դրանք տարբեր են ոչ միայն տարբեր հասարակություններում, այլև անգամ հասարակության տարբեր շրջանակներում, նույն երկրի տարբեր տարածքներում: Նորմերը տարբեր են քաղաքում և գյուղում: Էթիկական նորմերը մեզ թելադրում են վարքագիծ, և որքան դրանք ավելի պահանջկոտ են, այնքան ավելի լուրջ արժեհամակարգ է պետք ձևավորել, որպեսզի մարդը բնականորեն դրանց համապատասխանի:

«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար:

Զարգացած մշակույթները ունեն զարգացած էթիկական նորմեր: Երբ դրանք քայքայվում են, պահանջները նվազում են, առաջանում են արժեհամակարգային խնդիրներ: Ահա՝ ինչու առաջին հայացքից անվտանգ թվացող տարատեսակ «ազատությունները» իրենց հետ մեծ վտանգներ են բերում:

Արժեհամակարգը ծառի արմատներն են, բունը՝ էթիկական նորմերը, իսկ սաղարթը բարոյական դրսևորումներն են:

Ժամանակակից դպրոցի կարևորագույն առաքելություններից մեկը՝ գերնպատակը, թերևս, սովորողի մեջ ազգային բարոյական և հոգևոր արժեքների կերտումն ու

զարգացումն է, բարոյական, ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող անձի ձևավորումը: Ըստ էության, նշված արժեքները պետք է դառնան յուրաքանչյուր սանի անհատականության մասնիկը, նրա անձնային հատկանիշների ձևավորման հիմքը:

Այսօր հասարակության սոցիալ-տնտեսական արագ տեղի ունեցող փոփոխությունները հանգեցրել են սոցիալական և անհատական արժեքների համակարգի որակական փոփոխությունների, որոնց համընթաց քայլող և դրանից բխող ուսումնա-դաստիարակչական խնդիրներն արդյունավետ լուծող կրթական համակարգ ունենալու արդի պահանջը հանգեցրել է հանրակրթության հարափոխման, իսկ արժեքների որակապես փոփոխման կամ նոր արժեքների առաջացման պայմաններում խնդիրն առավել սրվում է, որն էլ, կարելի է ասել, յուրաքանչյուր ուսուցչի առաջադրում է իր առարկայի ուսումնական դասընթացի նյութերի միջոցով արժեհամակարգի ձևավորման, սովորողների անձի դաստիարակության բավականին բարդ խնդիրը: Որպեսզի յուրաքանչյուր ուսումնական առարկա սովորողների համար անձնային նշանակություն ստանա, անհրաժեշտ է, որ դասի ընթացքում ստեղծվի ստեղծագործական, համագործակցության մթնոլորտ, խրախուսվի իմացական ցանկացած գործընթաց, խրախուսվի յուրաքանչյուր նախաձեռնություն, յուրաքանչյուր իմացական փորձ:

Հարկ է նշել, որ սովորողների արժեքային համակարգի ձևավորման և այն ամուր հիմքերի վրա դնելու խնդիրը ներկայումս դպրոցի գլխավոր առաքելությունը պետք է լինի: Դա կապվում է ներկայիս ստեղծված աշխարհաքաղաքական պայմանների հետ, երբ մեր երկիրը հայտնվել է ազգային անվտանգության ապահովման, պետական մտածելակերպ ունենալու, ապագայի մարտահրավերներին դիմակայելու խնդրի, մեզ փոխանցված արժեքների փոխակերպման վտանգի, ազգի ինքնության պահպանման խնդիրների առջև: Հենց այստեղ է, որ պետք է առանձնակի կարևորվի առարկայի դասավանդման ընթացքում սովորողների մեջ համամարդկային ու ազգային արժեհամակարգի ձևավորման խնդիրը: Այսօր կրթությունը պետք է դառնա մեզ դարերով ավանդված ազգային, մշակութային, հոգևոր արժեքների փոխանցողն ու պահպանողը: Ազգային արժեքների ձևավորումն ու պահպանումն այսօր դպրոցի կարևորագույն նպատակներից է: Ներկայումս, երբ տարբեր ժողովուրդներ ու ազգեր ձուլվում անհետանում են, գերակա ռազմավարության նշանակություն ունեցող հիմնախնդիր է դառնում ազգային արժեհամակարգի ձևավորումն ու զարգացումը:

Սովորողների արժեհամակարգի, հանդուրժողականության և վարվելակերպի ձևավորումը մայրենիի դասավանդման ընթացքում:

Մայրենիի ուսուցումը արժեքներին հաղորդակցվելու լավագույն միջոցներից է: Սա նշանակում է, որ մայրենիի ուսուցումը չի ենթադրում և ներառում միայն լեզվական-քերականական նախնական գիտելիքների ուղղակի փոխանցում երեխային, այլ՝ դրանց միջոցով նաև ազգային հոգևոր ու բարոյական արժեհամակարգին հաղորդակցման ապահովում:

Առաջին դասարանում ուսումնասիրվող նյութերում մեծ տեղ են գրավում խրատական առածներն ու ասացվածքները, որոնք արժեքային դաստիարակության տեսանկյունից մեծ նշանակություն ունեն: Վերջիններս երեխաների մեջ սերմանում են սեր, հոգատարություն:

Բարության և մարդասիրության դասեր են տալիս աստվածաշնչյան պատմությունները, որոնցից մի քանիսը ընդգրկված են կրտսեր դպրոցի «Մայրենիի» դասագրքում:

«Մարդու կյանքի ամենամեծ երջանկությունը ուրիշներին օգտակար լինելու մեջ է»:

«Գիտելիքները մարդուն կշիռ են տալիս, իսկ արարքները՝ փայլ»:

Ահա ինչն է ամենակարևորը մարդու համար:

Անգնահատելի է նաև առակների դերը անհատի դաստիարակության ու ձևավորման, չարն ու բարին ընկալելու գործում:

Տարրական դասարաններում այս կամ այն դասանյութի ուսումնասիրումը հիմնականում իրականացվում է ընթերցանության միջոցով, որը հնարավորություն է տալիս կազմակերպել երեխաների ինքնուրույն գործունեությունը և նպաստել նրանց մտածողության, տրամաբանական, հաղորդակցական, համագործակցային, ինքնուրույն գործունեության և ստեղծագործական ունակությունների զարգացմանը: Սակայն ընթերցանությունը պետք է մշտապես զուգակցել նաև այլ՝ ինչպես ավանդական, այնպես էլ նոր՝ փոխգործուն կամ ինտերակտիվ մեթոդներով: Այս դեպքում աշակերտները ոչ միայն ընթերցում են դասանյութը, այլ նաև նրանում պատկերվող իրողությունները, հերոսների արարքները, հատկանիշները փորձում են կապել, համադրել և համեմատել

կյանքում, առօրյայում հանդիպող նմանատիպ իրավիճակների, խնդիրների հետ, գնահատել հերոսների արարքները, արտահայտել իրենց վերաբերմունքը այդ ամենի վերաբերյալ, հարցեր տալ:

«Կորած օրը» ուսումնական նյութի մատչելի և հասկանալի մատուցմանը և այն արժեհամակարգի ձևավորմանն ուղղելուն մեծապես նպաստում են ժամանակը արժևորելու, կարևորելու և գնահատելու, երեխաների մեջ աշխատասիրություն սերմանող հետևյալ ասացվածքները. «Ժամանակը ոսկի է», «Ով ալարի, ոչ դալարի»:

Երեխաների մեջ աշխատանքի նկատմամբ սեր և դրական վերաբերմունք է սերմանում նաև «Աշխատանքը գեղեցկացնում է մարդուն» ասացվածքը:

Ստեղծագործական, գեղագիտական և բարոյական արժեքներն ընկալելու համար անհրաժեշտ է, որ

- խորհեն ընթերցածի շուրջ
- գնահատեն նրանց արարքները
- իմաստավորեն նրանց խնդիրները
- համեմատեն իրենց կյանքը գրական կերպարների կյանքի հետ
- ձգտեն կատարել իրենց ընկալած բարոյական նորմերին համապատասխան արարքներ:

Յուրաքանչյուր հայի համար արժեհամակարգի ամենակարևոր բաղադրիչներից մեկը ընտանիքն է: Ընտանիքը սիրո, հարգանքի, հանդուրժողականության աղբյուր է, որի վրա ձևավորվում է քաղաքակիրթ հասարակությունը:

Ընտանիքի և ծնողական սիրո մասին դասերը պետք է յուրաքանչյուր աշակերտի համար անձնային նշանակություն ստանա, որպեսզի երեխան հասկանա, որ ընտանիքը սկսվում է հենց իրենից, ծնողի նկատմամբ իր վերաբերմունքից. չէ՞ որ բոլոր ժամանակներում էլ պետության զարգացումը դատել են ըստ ընտանիքի զարգացման աստիճանի և ընտանիքի հանդեպ պետության վերաբերմունքի:

Յուրաքանչյուր դաս իր մեջ ներառում է արժեհամակարգի տարբեր դրսևորումներ, ուստի իմ պարտքն եմ համարում գտնել այնպիսի մեթոդներ և հնարներ, որոնց միջոցով կարողանամ վեր հանել թեմայում բարոյական նորմը, այն քննարկել, ձևավորել այնպես, որ երեխայի մեջ դառնա հիմնարար արժեք:

Սեփական փորձառության ներկայացում

Սովորողների մեջ բարոյական արժեքներ սերմանելու և պահպանելու համար մշակվել են որոշ մեթոդներ և ռազմավարություններ.

1. ***դրամատիզացում***
2. ***պատմություն***
3. ***անձնական օրինակներ***
4. ***դերախաղեր***
5. ***խմբային աշխատանք***
6. ***հարցադրումներ***

Երկրորդ դասարանում, որտեղ սովորում է հինգ երեխա, դասերը արդյունավետ և նպատակային դարձնելու համար հաճախ եմ օգտագործում «Մտագրոհ» մեթոդը: Հարց ու պատասխանի միջոցով ամբողջությամբ վեր են հանվում ամենակարևոր մտքերը, գաղափարները:

«Ծեր պապն ու թոռը» դասը վարելիս իմ առջև խնդիր էի դրել աշակերտների հետ քննարկել ընտանիքը որպես հիմնարար արժեք, կարևորել նրա նշանակությունը և զարգացնել այն սիրո ու ջերմության մեջ պահելու կարողունակությունը:

Այն քննարկելու և զարգացնելու համար գործիք էի ընտրել **«Մտագրոհ»** մեթոդը:

Նախօրոք կազմել էի հարցերի երեք խումբ.

1. հարցեր՝ մինչև դասանյութ կարդալը (գրել գրատախտակին)
2. հարցեր՝ դասը վարելու ընթացքում
3. հարցեր՝ երկրորդ դասաժամից հետո:

Դասը վարելիս հաշվի էի առել երկու կարևոր սկզբունք՝

- ստեղծել հոգեբանական բարենպաստ մթնոլորտ
- դրսևորել ոչ գնահատողական վերաբերմունք:

Դասը սկսելուց առաջ հանձնարարել էի գրել շարադրություն « Ինչպես եմ վերաբերվում ծնողներիս» թեմայով:

Իրենց շարադրություններում նրանք գրել էին, որ ծնողներին պետք է օգնել, հիվանդ ժամանակ խնամել, երբ ծարավ են՝ ջուր տալ, երբ քնած են՝ չաղմկել և այլն:

Այնուհետև նրանց հանձնարարել էի լուռ կարդալ **«Ծեր պապն ու թոռը»** դասի առաջին հատվածը և պատասխանել գրատախտակին գրված առաջին հարցին՝ ինչու՞ հարսը որոշեց ճաշը պապիկին տալ փայտե տաշտակով: Նրանք պատասխանել էին՝ որովհետև պապը կավե ամանը ջարդել էր:

Երկրորդ՝ ո՞ր օրվանից հետո մարդ ու կին սկսեցին խնամել պապիկին, երեխաները պատասխանում էին՝ երբ իրենց տղան սկսել էր իր ծնողների համար տաշտակ պատրաստել:

Երկրորդ ընթերցման ժամանակ հանձնարարել էի դասը կարդալ բարձրաձայն և ամբողջական հատվածներով՝ «Զրույց հեղինակի հետ» հնարի կիրառմամբ: Տեքստի բովանդակության շուրջ վերլուծություններ և եզրահանգումներ կատարելու նպատակով դասը վարում էի նախօրոք կազմված հարցերի միջոցով: Երեխաները հարցերին տալիս էին անկեղծ, շիտակ պատասխաններ, երբեմն անում էին կշռադատված դատողություններ, երբեմն էլ՝ զգացմունքային:

Նախօրոք պատրաստել էի հետևյալ հարցերը.

1. Ինչպիսի՞ն էր պապիկը (թույլ էր, լավ չէր տեսնում, ձեռքերը դողում էին):

2. Ճի՞շտ վարվեց հարսը, որ զայրացավ պապիկի վրա(ո՛չ, պապիկը ծեր էր, մեղք էր, հիվանդ էր, իր ամուսնու հայրն էր, իր տան անդամն էր):

3.Ծերունին ինչու՞ միայն հառաչեց ու ոչինչ չասաց (որովհետև ինքը սիրում էր իր երեխաներին):

4. Ի՞նչ բնավորություն ուներ պապը (հանդուրժող էր, խեղճ էր, կռվարար չէր):

5. Ինչպիսի՞ն էին ծնողները (զիջող չէին, հարգող չէին, հանդուրժող չէին, դաժան էին):

6. Ինչու՞ լաց եղան ծնողները (ամաչեցին, զղջացին, իրենց սխալը հասկացան):

7. Ձեզ դուր եկա՞վ այս ընտանիքը (ոչ):

8. Ի՞նչ եք կարծում, պապիկի համար հարմարավե՞տ էր ապրել այս ընտանիքում (այո՛, որովհետև իր ընտանիքն էր: Ո՛չ, որովհետև իր հետ լավ չէին վարվում):

9. Ինչպե՞ս պետք էր վարվել, որ պապիկը իրեն լավ զգար (պետք էր խնամել, զրուցել, խաղալ իր հետ, զբոսնել):

10. Իսկ եթե դուք լինեիք պապիկի փոխարեն, ի՞նչ կանեիք (կզայրանայի, կասեի, որ վատ եք վարվում ինձ հետ):

11. Իսկ եթե լինեիք պապիկի որդու փոխարեն… (երբեք այդպես չէի վարվի, կխնամեի, իմ ձեռքերով կկերակրեի):

12. Եթե լինեիք հարսի փոխարեն, կամաչեի՞ք ձեր վերաբերմունքից (Այո՛, ես ներողություն կխնդրեի):

13. Իսկ եթե լինեիք թոռնիկի փոխարեն, ի՞նչ խորհուրդ կտայիք ծնողներին (պապը մեր տան մեծն է, հարգե՛ք, եթե որևէ բան ձեր սրտով չէ, ներե՛ք նրան, չէ՞ որ ինքը մեծ է):

14. Ինչի՞ց զարմացաք (ծնողի հետ այդպես չեն վարվում, չէ՞ որ իրենք էլ են մեծանալու: Ես զարմացա, որ բոլորն էին անտարբեր: Ընտանիքում չի կարելի միմյանց նկատմամբ անտարբեր լինել):

15. Ե՞րբ զայրացաք (Ես զայրացա, երբ հարսը զայրացավ պապիկի վրա: Ոչ թե պետք է զայրանային պապիկի վրա, այլ պետք է **ապրումակցեին**, օգնեին):

Կշռադատման փուլում **քառաբաժան** մեթոդով երեխային առաջարկվում է արտահայտել հույզերը: Սա նաև անդրադարձ է անցածի բովանդակությանը:

Ի՞ՆՉ ՏԵՍԱ	**Ի՞ՆՉ ԼՍԵՑԻ**
Տեսա պապիկին, ով թույլ էր, լավ չէր տեսնում, ձեռքերը դողում էին: Նա, մենակ նստած անկյունում, իր ճաշն էր ուտում:	Ես լսեցի պապիկի տխուր ձայնը, հառաչանքը:
Ի՞ՆՉ ԶԳԱՑԻ	**Ի՞ՆՉ ԵԶՐԱԿԱՑՐԻ**
Իմ լացը եկավ, ես զգացի, որ ծերությունը շատ վատ բան է: Ես զգացի, որ պապիկին չեն նկատում: Ես ցուրտ զգացի, պապիկի նկատմամբ ջերմ չէին: Ես զգացի նրա հոգու ցավը:	Ամենամեծ հարստությունը ընտանիքն է: Ընտանիքում պետք է հարգեն միմյանց: Ընտանիքում պետք է օգնեն միմյանց, զիջեն միմյանց, լինեն **հանդուրժող**: Ընտանիքում պետք է ապրումակցեն միմյանց:

Դասի ավարտին հանձնարարել էի գրել նույն՝ «Ինչպե՞ս եմ վերաբերվում ծնողներիս» շարադրությունը՝ ստուգելու համար՝ ի՞նչ է փոխվել նրանց արժեհամակարգում: Աշակերտներից շատերի աշխատանքներում ավելացել էին **խնամելու եմ, օգնելու եմ, սիրելու եմ, լսելու եմ, հանդուրժելու եմ, ամեն օր ջերմ խոսքեր եմ ասելու, հարգանքով եմ վերաբերվելու, ներողություն եմ խնդրելու, ապրումակցելու եմ** բայերը:

Ծնողների նկատմամբ սերը, հոգատար վերաբերմունքը, հանդուրժողականությունը այն դրսևորումներն են, որոնք գլխավոր տեղ են զբաղեցնում արժեհամակարգում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար:
2. Արժեքային համակարգը ձևավորվում է մտավոր, բարոյական, աշխատանքային, գեղագիտական, ֆիզիկական, իրավական, տնտեսագիտական, էկոլոգիական դաստիարակվածության արդյունքում:
3. Արժեքային համակարգի ձևավորման հարցում կարևոր ենք համարում առարկայի դասավանդման մեթոդների գործադրման նպատակը և ակնկալվող արդյունքը:
4. Սովորողների արժեհամակարգի ձևավորման ճանապարհին ուսուցման լավագույն տեսակը **ինտերակտիվն է**:
5. Արժեքային համակարգի ձևավորման գործընթացը պետք է լինի նպատակային և կազմակերպված, երկար և շարունակական:
6. Ուսուցման ճիշտ, համապատասխան մեթոդների ընտրությունը նպաստում է սովորողների արժեհամակարգի, հանդուրժողականության և վարվելակերպի ձևավորմանը:
7. Մայրենիի դասընթացը ներառում է գրական հարուստ ժառանգության, այդ թվում՝ բանահյուսական ստեղծագործությունների, բազմաթիվ նմուշներ, որոնց ուսումնասիրումը նպատակաուղղվում է նոր սերնդին ճիշտ դաստիարակելու, բարոյակրթելու, նրա արժեհամակարգը ձևավորելու, շրջապատող աշխարհի նկատմամբ վերաբերմունք, համատեղ աշխատելու՝ համագործակցելու կարողություններ ձևավորելու մշտատև գործին:
8. Դասի ընթացքում որքան շատ են արժեհամակարգի ձևավորմանը միտված աշխատանքները, այնքան զարգանում է արժեհամակարգը, աշակերտը դառնում է կիրթ, առաքինի, և,հետագայում, մենք ունենում ենք քրիստոնեական արժեհամակարգով օժտված քաղաքացիներ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Աղայան Ղ., Նվեր մանուկներին, Երևան, 1941
2. Խաչատրյան Ս., Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան, 2020
3. Նալչաջյան Ա. Ա., Հոգեբանության հիմունքներ, Երևան, 1997
4. www.armedu.am համացանցային կայք
5. Ведер М., основные социологические понятия, 1990
6. Նախաշավիղ, 3.2015